ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2017 թ.

№ 13 (1013)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 52 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՉԷ, ԱՅՆ ՄԱՐԴՈՒ ԷՈՒԹՅՈՒՆՆ Է

Մանկավարժական համալսարանի այս տարվա առաջին կուրսերի 1000 ուսանողներ երդվեցին հավատարիմ մնալ ուսուցչի կոչմանն ու զինվորագրվել առաջին ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցի բանակին:

Մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի՝ Քանաքեռում գտնվող տուն-թանգարանում կայացած երդմնառության հանդիսավոր արարողությանը ներկա էր ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ, ՀՊՄՀ խորհրդի անդամ և ՀՊՄՀ շրջանավարտ Էդուարդ Շարմազանովը:

«Ես չէ, որ պետք է արժևորեմ մանկավարժի դերի կարևորությունը մեր ժողովրդի ողջ պատմության ընթացքում: Մանկավարժ լինելը կոչում է, և ես կարծում եմ, որ մենք պետք է դառնանք այն պետությունը, որտեղ մանկավարժի մասնագիտությունը պետք է լինի ամենապահանջվածն ու էլիտարը: Ինձ համար մանկավարժի մասնագիտությունն այսօր էլ էլիտար է, քանզի նախ և առաջ նրանից է կախված ինչպիսի քաղաքացի, զինվոր, սպա, պետական ծառայողներ կունենանք և, առհասարակ, ինչպիսի հոգևոր և արժեքային համակարգում կապրի ՀՀ-ն»,- ասաց է. Շարմազանովը՝ ընդգծելով, որ ներկա ուսանողներն այսօր համալրում են Մանկավարժական համալսարանի և ապագա մանկավարժների մեծ բանակը:

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը նկատեց, որ արդեն 95-ամյա բուհն ավարտել են տասնյակ հազարավոր շրջանավարտներ, մարդիկ, որոնք համալրել են որակյալ ուսուցչական դպրոցը:

➤2

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՕՐԸ

ՀՀ կառավարության 2004-ի ապրիլի 22-ի որոշմամբ հոկտեմբերի 16-ը նշվում է որպես Հայ մամուլի օր: 1794 -ի հոկտեմբերի 16-ին Մադրասում լույս է տեսել հայկական առաջին տպագիր պարբերականը՝ «Ազդարարը»: «Ազդարարը» հայերեն լեզվով լույս է տեսել ամիսը մեկ անգամ՝ 1794-ի հոկտեմբերից մինչև 1796-ի մարտը: Ամսագիրը հրատարակել է Հարություն Շմավոնյանը: Ընդհանուր առմամբ լույս է տեսել 18 համար: Լուրերից բացի՝ պարբերականում տպագրվում էին նաև գեղարվեստական ստեղծագործություններ, թարգմանություններ և պատմական աշխատություններ:

ՄԱՐԻԵՏԱ ԾԱՀԻՆՅԱՆ

…Երևանում խնդրեցի, որ ինձ ցույց տան Խաչատուր Աբովյանի տունը: Ասացին, որ այն գտնվում է Քանաքեռ գյուղում: Այսօրվա պես հիշում եմ, թե ինչպես անցա նեղլիկ, ծուռումուռ և գարշահոտ փողոցներով ու հասա այնտեղ, մտազբաղ կանգնեցի տան առջև: Երեկոյանում էր, և այդ երեկոյի մշուշի մեջ ես մտովի տեսնում էի պատանի Աբովյանին, որ դուրս է գալիս ցածրիկ տան դռնակից, բարձրանում տափակ տանիքն ու երազանքով նայում աստղանկար երկնակամարին… Ես հեռացել էի ինքս ինձնից ու գնում-գնում էի Աբովյանի հետ նրա տառապանքի ու մաքառումների ճանապարհով…

Եվ այդ պահին ուսիս վրա զգացի ինչ-որ մեկի ձեռքը: Թեքեցի գլուխս, տեսա մի ծեր

➤3



ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՉԷ, ԱՅՆ ՄԱՐԴՈՒ ԷՈՒԹՅՈՒՆՆ Է

«Մենք հպարտ ենք մեր շրջանավարտներով, քանզի նրանք են սովորեցրել հարյուր հազարավոր հայորդիների գրաճանաչություն, ճանապարհ են բացել դեպի մեծ կյանք և սովորեցրել են ապրել: Եղեք արժանի նրանց, որպեսզի դառնաք 21-րդ դարին համապատասխան ուսուցիչներ»,- ասաց ռեկտորը՝ հավելելով՝ որտեղ լինի ՀՊՄՀ ուսանողը, այնտեղ արդեն իսկ արև կլինի:



Մայր Աթոռի Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն, Գերաշնոր Տեր Վարդան եպիսկոպոս Նավասարդյանը շնորհավորելով առաջին կուրսեցիներին՝ նկատեց, որ մեծ ու անգնահատելի է ապագա մանկավարժների ներդրումը մեր հայրենիքի վաղվա օրվա կերտման, պատանիների, երիտասարդների դաստիարակության և կրթության գործում:

«Մանկավարժությունը յուրաքանչյուրի համար պարզ մասնագիտություն չէ, և չպետք է լինի, մանկավարժությունը մարդու էությունը պետք է լինի. եթե մարդ չհավատա երեխայի փոփոխությանը, ապա երեխայի հոգու կրթության և դաստիարակության գործում չի կարող հաջողել, որքան էլ զինված լինի գիտելիքներով ու հմտություններով: Մաղթում եմ, որ ձեր ուսանողական շրջանն անցնի գիտելիքի, գտնելու, կյանքի հմտությունները սովորելու և ձեր կյանքում այնպիսի հոգևոր արժեքներ ունենալու փնտրտուքում, որոնք ձեզ կօգնեն մեր հայրենիքը շենացնելու, ավելի հզոր դարձնելու, վաղվա օրվա կերտման գործում»,- ասաց Տեր Վարդան եպիսկոպոս Նավասարդյանը: Եվ որպես ուսանողներին ուղղված հոգևոր խրատ՝ ամփոփեց. «Ձեր կյանքի ժամանակը կարողացեք ճիշտ օգտագործել, հենց այնպես մի վատնենք ձեր երիտասարդության գունեղ օրերը, հարստացրեք ձեր հոգևոր արժեքները, և ավելի երջանկացրեք ու զարդարեք ձեր կյանքը հավիտենական արժեքներով, ոչ թե անցողիկ»:

ՀՊՄՀ-ի մասնագիտական կրթության և մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը ուսանողներին մաղթեց ուսումնառության հետաքրքիր տարիներ և վստահեցրեց, որ բուհը բոլորի համար ստեղծել է հավասար պայմաններ և հնարավորություններ:

«Դուք հնարավորություն ունեք կերտելու ձեր կյանքը, մասնակցելու ձեր կյանքին վերաբերող բոլոր որոշումների ընդունման գործընթացներին, ստեղծագործելու, ինքնաբացահայտվելու և ինքնահիրացվելու: Ամեն ինչ ձեր ձեռքում է, դուք եք ձեր անձի կերտողը: Միշտ հիշեք՝ դուք այն մարդիկ եք, ովքեր շատ կարևոր գործառույթներ և առաքելություն ունեն»,- ամփոփեց Աիդա Թոփուզյանը

Մանկավարժական համալսարանում սովորելով՝ ամեն ուսանող պետք է լինի հպարտ և վեհ, որովհետև դուք շարունակելու եք հայ Մեծ լուսավորչի ճանապարհը, ով իր ողջ կյանքի ընթացքում մարտնչեց տգիտության դեմ, և այսօր, մենք ձեզ հետ միասին երդվում ենք, որ պետք է լինենք ճշգրիտ մանկավարժ և շարունակենք հայ մեծ լուսավորչի ճանապարհը»,- ասաց պարարվեստի մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանը: Նա հավելեց, որ այսօր էլ Մակավարժական համալսարանը համարվում է Հայաստանի առաջատար բուհերից, քանզի կրթական և գիտական մակարդակը մասնագետների պատրաստման առումով հասցվել է միջազգային մակարդակի:

Ուսանողներին ողջունեց նաև ՀՊՄՀ ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյանը և մաղթեց արդյունավետ ու արգասաբեր ուսումնական տարիներ:

Բանասիրական ֆակուլտետի ուսանող Կառլեն Նազարյանը դեռևս մանկուց է երազել դառնալ գրականագետ, իսկ դրան տանող ուղին, ըստ նրա, հենց լավ մանկավարժ դառնալն է: Մինչ երդման արարողության գալը, ֆակուլտետում կազմակերպվել է հանդիպում հոգևոր ներկայացուցչի հետ, ով բացատրել է երդման խորհուրդն ու կարևորությունը: «Երդվում ենք և խոստանում լինել արժանի մանկավարժներ և բանասերներ, դաստիարակել ու կյանք ճանապարհել բազմաթիվ սերունդների»,- ասաց Կառլեն Նազարյանը:

Տոնական միջոցառումը շարունակվեց հետաքրքիր համերգային ծրագրով:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ, ԽՈՆԱՐՀՎՈՒՄ ԵՄ ՁԵՐ ԱՌՋԵՎ

Ի՞նչ կմնար մարդկությունից, տե՛ր Աստված,
Թե չունենար ուսուցիչներ, դպրոցներ:
Ահա ինչու ամբողջ հոգով և սրտանց-
Ուսուցիչներ, խոնարհվում եմ ձեր առջև:

Ամեն մարդ էլ... ունի սիրած ուսուցիչ,
Հանճարն անգամ... Ուսուցիչ է ունեցել:
Դուք անանո՞ւն, ձեր սաները անվանի:-
Ուսուցիչներ, խոնարհվում եմ ձեր առջև:

Ախ, շա՜տ հաճախ տաբապել եք անաղմուկ,
Լույս եք ցանել, բայց հալածվել ու խաչվել:
Տիրողները չքեղաշո՞ւք, դուք անշո՞ւք...
Ուսուցիչներ, խոնարհվում եմ ձեր առջև:

Նատ դժվար էր խավար դարում ձեզ համար:
Այս լույս դարում, օ՛, դժվա՛ր է առավել-
Երեխաներն ամե՛ն ինչ էլ գիտեն լավ...
Ուսուցիչներ, խոնարհվում եմ ձեր առջև:

Թեկուզ կյանքում ապտակել եք նաև ինձ,
Թեկուզ նաև երկուսներ եմ ստացել,
Այնուհանդերձ, այնուհանդերձ, էն գլխից-
Ուսուցիչներ, խոնարհվում եմ ձեր առջև:

Հողագունդը գլոբո՞ւս է հմայիչ,
Բայց ուզում են այն կործանել ու ջարդել:
Հողագնդին հարկավոր է ուսուցիչ...
Ուսուցիչներ, խոնարհվում եմ ձեր առջև:

Էրեբունի-Երևանը 2799 տարեկան է

Մ. թ. ա. 9-րդ դարում Հայկական լեռնաշխարհի Վանա լճի ավազանում առաջացավ Վանի հայկական (Արարատյան) թագավորությունը՝ Ուրարտուն, Բիայնիլին: Պետության հիմնադիրը Արամե թագավորն էր: Վանի թագավորությունը ժամանակի ամենազարգացած տերություններից էր:

Էրեբունի-Երևանը 2799 տարեկան է: Արգիշտի Առաջին արքան տիրակալության 5-րդ տարում կառուցեց այն որպես բերդաքաղաք: Առաջին բնակիչները զինվորներ էին՝ թվով 6600: Արգիշտի Առաջինի թողած սեպագիր արձանագրությունը վկայում է. «Խալդ աստծո մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, այս անառիկ ամրոցը կառուցեց և անվանեց Էրեբունի քաղաք՝ ի հզորություն Բիայնա երկրի և ի սարսափ թշնամիների: Արգիշտին ասում է... Հողն ամայի էր, այստեղ ես մեծ գործեր կատարեցի: Խալդ աստծո մեծությամբ Արգիշտի՝ Մենուայի որդի, արքա հզոր, արքա Բիայնա երկրի, տերը Տուշպա քաղաքի»:

Պահպանված պատմական այդ արձանագրությունը հնարավորություն է տվել գիտնականներին հստակեցնելու Երևանի ծննդյան տարեթիվը՝ մ. թ. ա. 782թ.: Էրեբունի-Երևանը հիմնադրվել է Հռոմից 29 տարի առաջ, Բաբելոնի, Նինվեի ու Պերսեպոլիսի հասակակիցն է, բայց, ի տարբերություն վերջիններիս, դարձել է 21-րդ դարի ծաղկուն քաղաքներից մեկը:

Դարերի ընթացքում մեծ է եղել քաղաքի դերը Հայաստանի տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում: Առևտրի այդ մեծ կենտրոնով էին անցնում քարավանային բազմաթիվ ճանապարհներ: Հնագիտական պեղումները վկայում են, որ Էրեբունին վարչական խոշոր կենտրոն էր՝ ամենահզորը Արարատյան դաշտում

Դարերի ընթացքում քաղաքը մնացել է կանգուն՝ անցնելով բազում արհավիրքների ու փորձությունների միջով: Անթիվ են եղել ասորիների, հռոմեացիների, բյուզանդացիների, պարսիկների, արաբների, սելջուկների, մոնղոլների ու թուրքերի ասպատակությունները, բայց ժողովուրդը շարունակում էր արարել՝ դիմակայելով բոլոր արհավիրքներին: Զուգահեռաբար ստեղծվել է քաղաքակրթություն՝ արժեքավոր մշակույթով ու գիտությամբ:

...1918թ. մայիսի 28-ին Երևանը հռչակվեց Հայաստանի Հանրապետության, իսկ 1920թ. նոյեմբերի 29-ին՝ Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք:

Երևանը Խորհրդային Միության առաջին քաղաքն էր, որն ունեցավ գլխավոր հատակագիծ: Ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի հեղինակած գլխավոր հատակագիծը հաստատվեց 1924 թվականին. նախատեսված էր 150000 բնակչի համար:

Ժամանակի ընթացքում քաղաքի վարչական տարածքը մեծացավ 5 անգամ: Սկսվեց կառուցապատումը. Երևանը կառուցապատվում էր բազալտով, գրանիտով, մարմարով: Ամենատարածված շինանյութը վարդագույն տուֆն էր: Եվ քանի որ այդ շինանյութն ինքնատիպ գունագեղություն ու առանձնահատուկ երանգ էր տալիս քաղաքին, սկսեցին Երևանն անվանել «Վարդագույն քաղաք»: Հետագա 70 տարում մայրաքաղաքի տարածքն էլ ավելի ընդլայնվեց:

1991թ. սեպտեմբերի 21-ին Երևանը դարձավ ոչ միայն անկախ Հայաստանի Հանրապետության, այլև աշխարհասփյուռ հայության մայրաքաղաք:

«Էրեբունի-Երևան» տոնն առաջին անգամ նշվել է 1968 թ-ին՝ Էրեբունի ամրոցի հիմնադրման (մ. թ. ա. 782 թ.) 2750-ամյակի առթիվ:

«Էրեբունի-Երևան» տոնը կոչվում է նաև «Երևանի տոն», «Երևանի օր». 1983 թ-ից դարձել է ավանդական (չի նշվել միայն 1991–98 թթ-ին):

Տոնի շրջանակներում կազմակերպվում են Երևանին նվիրված գեղանկարների ցուցահանդեսներ, մեծ համերգներ՝ Հանրապետության և մեծ ու փոքր հրապարակներում, պուրակներում, թատերականացված ներկայացում՝ Էրեբունի ամրոցի հիմնադիր Արգիշտի արքայի «մասնակցությամբ»՝ Էրեբունի թանգարանի մերձակա հրապարակում: Առաջին օրն ավարտվում է Հանրապետության հրապարակում՝ տոնական մեծ հրավառությամբ:

«Էրեբունի-Երևան» տոնակատարության համար 1968 թ-ին հատուկ գրվել է «Էրեբունի-Երևան» երգը (խոսքը՝ Պարույր Սևակի, երաժշտությունը՝ Էդգար Հովհաննիսյանի), որը հետագայում դարձել է քաղաքի օրհներգը: Այդ երգն առաջին անգամ կատարվել է 2750 հոգուց բաղկացած երգչախմբով՝ Թաթուլ Ալթունյանի ղեկավարությամբ:

Առաջին տոնակատարության ժամանակ Հանրապետության հրապարակի մերձակա զբոսայգում բացվել է նաև 2750 ցայտաղբյուրներից բաղկացած շատրվանների համալիրը:

Քաղաքի տոնը սովորաբար նշվում է հոկտեմբերի 10–11-ին:

2008 թ.-ին մեծ շուքով նշվել է քաղաքի հիմնադրման 2790-ամյակը:

ՄԱՐԻԵՏԱ ԾԱՀԻՆՅԱՆ

➤1 մարդու, մազակալած, կնճռոտ դեմքով: Հիմա էլ, երբ նորից հիշեցի նրա դեմքը, մարմնովս ասես մրջյուններ անցան: Նա նայում էր ինձ

մռայլ աչքերով ու ռուսերեն ասում.

- Ինչու՞ եք այդպես մտահոգված նայում... Աբովյանի՞ն եք փնտրում... Ես կենդանի վկա եմ ու գիտեմ, թե ինչպես անհայտացավ նա... Եթե ուզում եք իմանալ, ես ձեզ ցույց կտամ նրա տեղը: Եկեք ինձ հետ:

Ես ցնցվեցի, ինձ թվաց, թե երազում եմ, բայց արդեն քայլում էի նրա ետևից: Մենք անցանք նեղլիկ ու ծուռտիկ մի քանի փողոց և մտանք խոնավ մի բակ: Բակի չորս կողմը հողե պատերով տներ էին: Նա բացեց այդ տներից մեկի դուռը, ինձ ներս հրավիրեց: Ես ներս մտա կիսամութ սենյակը: Բարձրահասակ, չորուկ ծերունին կանգնեց սենյակի կենտրոնում, արտակարգ երկար, չորություն արտահայտող ձեռքերով ցույց տվեց սենյակի հողե հատակն ու ասաց.

- Քանդեցեք այստեղ և դուք կգտնեք Աբովյանի դին...

Ես սարսափահար դուրս եկա, բայց մինչև հիմա հիշում եմ այդ ծեր մարդու ձեռքը՝ սև, ոսկրոտ...

(Շահինյանը Հայաստանում է եղել 1922 թվականին: Այս հուշը գրի է առնվել 1978-ին):

Նոր խորագիր

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՄԵՐ ԲՈՒՀԻ ԾՐԱԳՐԱՎԱՐՏՆ Է

«Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը, նա լավ ուսուցիչ կլինի: Եթե ուսուցիչը սիրում է աշակերտին, ապա նա ավելի լավ ուսուցիչ կլինի, քան նա, ով կարդացել է բոլոր գրքերը, բայց չի սիրում իր աշակերտին: Եթե ուսուցիչը սիրում է և իր աշխատանքը, և իր աշակերտին, նա կլինի կատարյալ ուսուցիչ»: Լև Տոլստոյը երիցս իրավացի է: Կատարյալ ուսուցիչը պետք է սիրի և՛ իր աշխատանքը, և՛ երեխաներին:

ՀՊՄՀ-ի Վ. Թոթովենցի անվան N 57 դպրոցի ուսուցչուհի Տաթևիկ Աբրահամյանի մասին գրելիս ակամա մտաբերեցի ռուս մեծ գրողի խոսքերը: Աշխատանքային փորձը միայն բավական չէ, պետք է այդ փորձը իմաստավորվի աշխատանքային նվիրումով ու աշակերտների համար դառնա ոչ միայն դեպի գիտելիքներն ուղղորդող, այլև կյանքի ընթացքը լուսավորող ճանապարհ: Տաթևիկ Աբրահամյանի հավատամքը հենց այդպիսին է՝ սիրել աշակերտներին ու սովորեցնել առաջ շարժվել, հաղթահարել դժվարություններն ու

միշտ քայլել դեպի լույսը:

Տաթևիկ Սերյոժայի Աբրահամյանն ավարտել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Սկզբնական կրթության ֆակուլտետի «Մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա» բաժինը և 2015 թվականից աշխատում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնական դպրոցում՝ որպես տարրական դասարանի դասվար: Կարծես երեկ էր, որ հրաժեշտ տվեց սիրելի բուհին՝ երկչոտ ու մի քիչ կարկամած ոտք դնելով դպրոցի շեմից ներս: Բայց արդեն երեք տասնամյակ է, ինչ աշխատում է որպես ուսուցիչ, 30 տարվա մանկավարժական փորձը մի ամբողջ կյանք է, որ ուղեկցել է նրան.... Այդ բեղուն աշխատանքային տարիների ընթացքում նա հասցրել է վայելել աշակերտների, ծնողների, ինչպես նաև գործընկերների սերն ու հարգանքը:

Տ. Աբրահամյանը մշտապես ակտիվ մասնակցություն է ունենում դպրոցում կազմակերպվող միջոցառումներին: Նա նաև հիմնական դպրոցի տարրական դասարանների մեթոդական միավորման նախագահն է, որտեղ իրականացվում են տարաբնույթ աշխատանքներ՝ ուղղված սովորողների կրթադաստիարակչական աշխատանքներին:

Սիրված ուսուցչուհու մանկավարժական փորձը, մարդկային ու մասնագիտական բարձր որակները նրան հնարավորություն ընձեռեցին հիմնական դպրոցում ստեղծել տարրական դասարանների ուսուցիչների համախմբված ու համագործակցող թիմ: Պատահական չէր, որ այս տարի Տաթևիկ Աբրահամյանը Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ա. Սադոյանի կողմից արժանացավ պատվոգրի՝ սերունդների կրթության և դաստիարակության գործում ունեցած նշանակալի ավանդի, բեղմնավոր գործունեության, նվիրված աշխատանքի և Ուսուցչի օրվա կապակցությամբ:

Արմինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ասպիրանտուրայից անցումը դոկտորանտուրային անհրաժեշտություն է

Մանկավարժական համալսարանում կայացավ Սերգո Երիցյանի, Արմեն Ճուղուրյանի և Ատոմ Մխիթարյանի համահեղինակած «Դոկտորանտուրա. բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կազմակերպման հիմունքներ» ուսումնամեթոդական ուղեցույցի շնորհանդեսը: Այն հրատարակման է ներկայացվել ՀՊՄՀ-ի Գիտական խորհրդի որոշմամբ և ՀՀ ԿԳ-ի կողմից երաշխավորվել է որպես ուսումնամեթոդական ձեռնարկ:

Աշխատության հեղինակները ձեռնարկում անդրադարձել են հետբուհական կրթության արևմտյան փորձին՝ զուգահեռներ անցկացնելով ասպիրատուրայի և դոկտորանտուրայի միջև: Համահեղինակները կարծում են, որ ասպիրատուրայից անցումը դոկտորանտուրային արդեն անհրաժեշտություն է, քանզի ասպիրանտուրական և դոկտորանտուրական կրթական համակարգերի միջև առկա են էական տարբերություններ:

Մանկավարժական համալսարանի ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց համահեղինակներին գրքի լույսընծայման առթիվ և վստահեցրեց, որ գրքում ներկայացված են դոկտորանտուրայի կազմակերպման հիմունքներ, որոնք խիստ կարևոր են կրթության երրորդ աստիճանի գործընթացը կազմակերպելու, դրա վերաբերյալ բավարար պատկերացում կազմելու տեսանկյունից:

«Կրթության 3-րդ աստիճանը մենք բաց ենք թողել և կարծես ռիսկ չենք անում ոտք դնել այդ համակարգ: Մեր մտածողությունն ու գիտական աստիճանաշնորհման նախկին համակարգին ամուր կառչած լինելը հնարավորություն չեն տալիս հեշտությամբ գնալ բարեփոխումների և այս ասպարեզում ունենալ շոշափելի հաջողություններ»,-նշեց գրքի համահեղինակ պրոֆեսոր Սերգո Երիցյանը և հավելեց, որ գրքի ստեղծման ընթացքում առաջնորդվել են բացախոսության, բազմազանության, բազմակարծության սկզբունքներով:

Ձեռնարկն օգտակար է բարձրագույն մասնագիտական կրթության երրորդ աստիճանում սովորող ուսանողների համար, քանզի աշխատությունում ներկայացրել է՝ ինչպես հրատարակել գիտական հոդված, ինչպես արդյունավետ մասնակցել գիտաժողովներին, ինչպես ձևակերպել հետազոտության նորույթը, շարադրման հմտություններ և այլն:

«Դոկտորանտուրան ծառայում է գիտության զարգացմանը, ոչ թե հանուն գիտության»,-նշեց ձեռնարկի հեղինակներից Արմեն Ճուղուրյանն ու ներկայացրեց եվրոպական հայտնի համալսարաններում դոկտորանտուրայի ձևավորումը, մեզանում այդ համակարգի ստեղծման կարևորությունն ու նպատակները:

Իսկ համահեղինակ Ատոմ Մխիթարյանն էլ անդրադարձավ ձեռնարկը գրելու հիմնական շարժառիթներին՝ ՀՀ կառավարության ծրագրից մինչև գիտության, կրթության և արտադրության ու նորարությունների ինտեգրացիա: Նա ընդգծեց նաև, որ հայկական գիտական համակարգում այս դաշտն ուսումնասիրված չէ և չկան կրթության երրորդ աստիճանի կազմակերպման ընդհանուր չափանիշներ:

Հեղինակները ասպիրանտուրայում առաջնահերթություն են համարում համակարգի ինստիտուցիոնալ վերակառուցումները, առանց որոնց մասնագիտական կրթության երրորդ աստիճանում բարեփոխումները մակերեսային բնույթ կկրեն: Ըստ հեղինակների՝ չափազանց շտապողականությունը ասպիրանտուրայի և գիտական աստիճանաշնորհման համակարգի բարեփոխումների գործընթացում պետք չէ, սակայն, մյուս կողմից, տեղում դոփելն էլ անթույլատրելի է, քանի որ ներկայումս բարձրագույն մասնագիտական կրթության կազմակերպման արդյունավետության բարձրացումն ու միջազգային չափանիշներին համապատասխանեցումը խնդիր է: Հեղինակները կողմնակից են դանդաղ քայլերով, բայց արմատական վերակառուցումների հաստատակամությամբ սահուն անցում կատարել ասպիրանտուրայից դոկտորանտուրային:

«Մինչև այժմ հայ իրականությունը նման գործընթացներում առաջնորդվել է ռուսական գիտական աշխարհում հայտնի գիտական մեթոդական տարբեր ձեռնարկներով: Գիտության մեջ կան չլուծված բազում հարցեր, որոնց պատասխանները ակնկալում ենք ստանալ նմանատիպ ձեռնարկներից»,-ամփոփեց Մանկավարժական համալսարանի Գիտահետազոտական կենտրոնի ղեկավար Կամո Վարդանյանը:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Հայաստանի պատմագիտությունը՝ նոր հարթակում

Հայաստանի պատմագետների միությունը ստեղծվել է 2016 թվականին: Հասարակական կազմակերպության կարգավիճակ ունեցող կառույցին այսօր արդեն անդամակցում են Հայաստանի և սփյուռքի ավելի քան 100 պատմաբաններ: Մասնագիտական այս կառույցի նպատակն է զարգացնել հայ պատմագիտական միտքը:

Սեպտեմբերի 29-30-ը Պատմական գիտությունների համաշխարհային կոմիտեի գլխավոր ասամբլեայի հերթական նիստը գումարվեց Մոսկվայում, որի ընթացքում քննարկվեց միջազգային այս կառույցին Հայաստանի պատմագետների միության անդամակցության հարցը, որի արդյունքում դարձավ միջազգային կառույցի անդամ. ընդ որում հետխորհրդային տարիների տարածքի երկրներից Հայաստանը 1926 թվականին հիմնադրված միջազգային այս կառույցի միակ անդամն է Ռուսաստանից հետո:

Մոսկվայում կայացած նիստին Հայաստանից մասնակցում էին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, Հայաստանի պատմագետների միության գործադիր տնօրեն, ԵՊՀ պատմաբան Միհր Հովհաննիսյանը և Մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը:

ՀՊՄՀ դեկանը հանդես եկավ զեկուցումներով, որոնք ներկայացրեց անգլերենով: Անդրադառնալով կարևոր խնդիրներին՝ նա նշեց. «Ունենալով հազարամյակների պատմություն և պատմագիտական մտքի զարգացման տասնամյակների հարուստ ավանդույթներ՝ հայկական պատմագիտական միտքը զարգացման նոր փուլ մտավ 1991 թվականի Հայաստանի անկախացումից հետո: Ներկայում հայ պատմագետների միությունն իր առջև դրած կարևոր խնդիրներ ունի, որոնցից է նորովի, գաղափարական զանազան ազդեցություններից զերծ, համակարգված և պատմագիտության զարգացման արդի մոտեցումներին համահունչ հայոց պատմության շարադրման հարցը:

Պետք է նշել, որ այս ուղղությամբ վերջին 25 տարիների ընթացքում կատարվել է հսկայական աշխատանք:

Հայ նոր պատմագիտության երկրորդ կարևոր խնդիրը հազարամյա հայոց պատմությունը համաշխարհային պատմության համատեքստում ներկայացնելն է՝ ցույց տալով վերջինիս ինքնատիպ և միաժամանակ համաշխարհային պատմական զարգացումներին խիստ համահունչ ընթացքը:

Նորաստեղծ կառույցի առջև ծառացած մյուս կարևոր հիմնախնդիրը պատմակեղծարարության դեմ պայքարն է, երևույթ, որն, անխոս, 21-րդ դարում ուղղակիորեն չարիք է դարձել ազնիվ և գիտական անաչառության սկզբունքներով ստեղծագործող պատմաբանների համար ողջ աշխարհում»:

Ի՞նչ կտա այդ անդամակցությունը հայ պատմագիտությանը. մասնակիցները համոզված են, որ այն նոր հարթակ է ու հնարավորություն՝ միջազգային մակարդակով ոչ միայն ներկայացնելու մեր պատմությունը, այլև պայքարելու պատմական կեղծարարության և հայ հակաքարոզչության դեմ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Աշխատանքային այց Չինաստան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մակավարժական համալսարանի աշխատակազմի և միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր Արա Երեմյանը և միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Քրիստինա Ծատուրյանը սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 1-ը պաշտոնական այցով գտնվում էին Չինաստանի ժողովրդական հանրապետության Չունցին քաղաքի Հարավարևմտյան համալսարանում: Այցի ընթացքում մեր պատվիրակությունը հանդիպեց Հարավարևմտյան համալսարանի պրոռեկտորների, Կրթության ֆակուլտետի ղեկավարության, միջազգային համագործակցության և միջազգային քոլեջի ղեկավարության, ինչպես նաև Քաղաքագիտության և կառավարման ֆակուլտետի ղեկավարության հետ: Պատվիրակության աշխատանքներին աջակցում էր նաև ՀՊՄՀ շրջանավարտ Անի Մելիքյանը, ով ներկայումս սովորում է Չունցինի Հարավարևմտյան համալսարանում:

Այցի ընթացքում քննարկվեցին համատեղ մագիստրոսական կրթական ծրագրերի իրագործման, երկարաժամկետ և կարճաժամկետ կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողների փոխանակման, համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացման, ՀՊՄՀ-ում Հարավարևմտյան համալսարանի մագիստրոսների պրակտիկայի անցկացման և այլ համատեղ կրթական նախաձեռնությունների վերաբերյալ հարցեր: Հարավարևմտյան համալսարանի ղեկավարությունը մեծ հավանություն տվեց առաջարկվող ծրագրերի իրագործմանը և հավաստիացրեց, որ կգործադրեն բոլոր ջանքերը նախանշված համագործակցային գործընթացներն իրականացնելու համար:

Մանկավարժական համալսարանի պատվիրակությունը փոխանցեց համալսարանի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական կազմի պատրաստակամությունը՝ բոլոր հնարավոր միջոցները գործադրելու և համագործակցությունը գործառնական մակարդակում իրագործելու մասին:

Ճապոնացի մասնագետները՝ Մանկավարժականում

Տոկիոյի մշակութային արժեքների ազգային հետազոտական ինստիտուտի գիտաշխատող Հիրո Կանշան, Սագայի ազգային համալսարանի Արվեստի և տարածաշրջանային դիզայնի ֆակուլտետի դոցենտ Միե Իշիին, NHK Բունկա կենտրոնի դասախոս Միդորի Յակոյաման և նրանց ուղեկցող մի շարք անձինք այցելել էին ՀՊՄՀ-ի Գեղարվեստական կրթության ֆակուլտետ:

Ֆակուլտետի դեկանն, ամբիոնների վարիչների, դասախոսների հետ միասին, հյուրերին ներկայացրեց ֆակուլտետի կառուցվածքը և ուսումնական գործընթացը: Հյուրերը ծանոթացան նկարչության և դեկորատիվ կիրառական արվեստի արվեստանոցներին, ուսանողների ուսումնական և ստեղծագործական աշխատանքներին:

Ճապոնացի մասնագետներն արտահայտեցին իրենց դրական կարծիքները և հույս հայտնեցին, որ Մանկավարժական համալսարանի հետ համագործակցության եզրեր կգտնեն:

Գործընկերները քննարկումների արդյունքում որոշեցին համագործակցել դասախոսների և ուսանողների փոխանակային ծրագրերի, համատեղ ավարտական աշխատանքներ ղեկավարելու շուրջ և այլ ուղղություններով:

Հյուրերը Հայաստան էին այցելել «Տեքստիլի արվեստ և պահպանում. հանգուցելով անցյալն ու ներկան» խորագրով սեմինարի շրջանակում, որը նախաձեռնել էին ՀՀ մշակույթի նախարարությունը և Տոկիոյի մշակութային արժեքների ազգային հետազոտական ինստիտուտը՝ հայ-ճապոնական համատեղ ծրագրի շրջանակում:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Դարձնել գրավիչ նոր սերնդի համար

Սեպտեմբերի 19-20-ը գեղատեսիլ Ծաղկաձորի գրողների ստեղծագործական տանը կայացավ աշխատաժողով, որը միտված էր նորարար գրադարանների գործառույթների թարմացմանը և նորացմանը:

Աշխատաժողովը կազմակերպվել էր Հայաստանում ԱՄՆ դեսպանության տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի տնօրեն Ներսես Հայրապետյանի կողմից: Մասնակցում էին շուրջ 30 ներկայացուցիչներ Հայաստանի մարզային, բուհական և այլ գրադարաններից, ինչպես նաև Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դասախոսներ:

Բացման խոսքով հանդես եկավ Ներսես Հայրապետյանը:

«Համակարգչային անվտանգության կամ ինչպես պաշտպանել գրադարանների ֆեյսբուքյան էջերը» օգտակար զեկուցումով հանդես եկավ տեղեկատվական անվտանգության մասնագետ Սամվել Մարտիրոսյանը:

Գրականագետ Գոհար Աքելյանն անդրադարձավ էլեկտրոնային ընթերցանության խնդիրներին՝ հանդես գալով «Էլեկտրոնային ընթերցանության հնարավորություններն ու մարտահրավերները» թեմայով զեկուցմամբ:

«Քինդլ ընթերցիչների օգտագործումը գրադարանում գործնական խորհուրդներ» թեմայով նյութը ներկայացրեց Լոռու մարզային գրադարանի տնօրեն Անդրանիկ Հովհաննիսյանը: ԱՄՆ-ի դեսպանության աշխատակից Ավետիք Պետրոսյանը գրադարանային աշխարհի ներկայացուցիչներին ծանոթացրեց «գրադարանային փոդքասթերի ստեղծմանն ու վարմանը, գրադարանային միացյալ վերհարթակի ստեղծմանը»:

Համապատասխանաբար իրենց գրադարանների կայք էջերը ներկայացրին Մարինե Ղազարյանը, Անգին Ավոյանը (Երևանի Ավ. Իսահակյանի անվան քաղաքային գրադարան), Անի Լալայանը (Հանրապետական գիտաբժշկական գրադարան), Լիլիթ Վարդանյանը (Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական գրադարան) և այլն:

«AR Ce և VR տեխնոլոգիական հեղափոխություն, ինչպես գրադարանները և թանգարանները դարձնել գրավիչ նոր սերնդի համար» չափազանց հետաքրքրաշարժ զեկուցումով հանդես եկավ Առլուպա ընկերության համահիմնադիր և գլխավոր տնօրեն Արման Աթոյանը:

Ընդհանուր առմամբ աշխատաժողովը ստացված էր, հագեցած և բովանդակալից: Գրեթե բոլոր ելույթներն ուղեկցվում էին հարց ու պատասխանի և քննարկման հարթակով: Համաձայնություն ձեռք բերվեց մի քանի բանախոսների հրավիրել ՀՊՄՀ թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոն՝ դասախոսություն կարդալու ուսանողության համար:

Ավելի քան լիահույս ենք, որ նմանատիպ աշխատաժողովները կկրեն շարունակական բնույթ՝ ընդարձակելով գրադարանային ոլորտի աշխարհագրությունը և ձեռքբերումները:

Արմինե ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ



ԵՍ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՄ ԱՅՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ, ՈՐՏԵՂ ՈՒՍԱՆԵԼ Է ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԸ

Բանասիրությունը բոլոր ժամանակներում եղել է վեհագույն մասնագիտություն և առ այսօր պահպանում է իր արդիականությունը. այն հին մասնագիտություն է, և հենց այդ հնի մեջ է ամփոփված բանասիրության կատարելությունը: Այս հումանիտար մասնագիտությունը մարդուն դարձնում է գեղեցիկ, հնարավորություն տալիս բացահայտելու կյանքը, հասկանալու իր առջև դրված խնդիրների լուծման հնարավոր տարբերակները: Մարդը դառնում է խոսուն, կարողանում է հստակ ձևակերպել իր մտքերը, իսկ դա նշանակում է, որ նա դառնում է լիարժեք անհատ: Մեր երկրի բարձրագույն հաստատությունները բոլոր ժամանակներում տվել են բարձրագետ մասնագետներ, և դրա շնորհիվ է, որ մեր լեզվական համակարգը պահպանել է իր յուրահատկությունը, պերճությունն ու հմայքը: Մանկավարժական համալսարանն այդ հաստատությունների թվում առաջինն է: Բոլորիս քաջ հայտնի է, որ մեր համալսարանի բանասիրական ֆակուլտետը բոլոր ժամանակներում եղել է մայրենիի պահպանման և ավանդման բարձրագույն հարթակ, որը հնարավորություն է տվել համալսարանում ուսանած անձանց դառնալու հայոց լեզվի և գրականության հմուտ մասնագետներ: Մեր շատ սիրելի պրոֆեսոր Ալլիտա Դոլուխանյանը շատ սերունդներ է ճանապարհել դեպի դպրոց: Եվ այսօր, երբ նկատելի է դիմորդների պակաս, և թափուր տեղեր են առաջացել այնպիսի մասնագիտություն գծով, ինչպիսին բանասիրությունն է, Մանկավարժական համալսարանի այս ֆակուլտետն իր դռները բացել է մեծ թվով ուսանողների համար: Երջանկությամբ և մեծագույն պատվով նշում եմ, որ այդ ուսանողներից մեկը նաև ես եմ: Մասնագիտության ընտրության մտորումները երկար են տևում շատերի համար, ինձ համար՝ ոչ, քանզի դեռ մանկուց եղել եմ գրքերի աշխարհում, պաշտել եմ գրականությունը, սիրել մեր մայրենին և ի սկզբանե որոշել դառնալ բանասեր, լինել բանիմաց գրականագետ: Թվում է՝ կարևորը միայն մասնագիտական կողմնորոշումն է, բայց դրանից հետո առաջանում է մեկ այլ կարևոր պահանջ՝ որտեղ ուսանել, դառնալ հմուտ մասնագետ: Անտարակույս էր, որ դիմելու էի բանասիրության գծով և, բնականորեն, իմ պահանջմունքը՝ ապահովել որակյալ կրթությամբ, լինել անաչառ և ազնիվ, կարող է բավարարել միայն Մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Եվ ես, առաջին հայտով դիմելով հենց այս ֆակուլտետ, կատարեցի իմ կյանքի ուղիներից մեկի՝ ամենակարևորի վերաբերյալ ամենաճիշտ որոշումը: Ես գիտեի, որ այս ֆակուլտետն իմ լուսավոր ապագայի հաստատուն հիմքն է, որովհետև մի ներքին ձայն իմ ամենօրյա ուղեկիցն էր դարձել: Հիմա, երբ սովորում եմ այստեղ, զգում եմ, թե ինչ մեծ հետաքրքրությամբ եմ ուսումնասիրում հայ գրականությունը, հայոց լեզուն, իսկ այդ հետաքրքրությունն արթնանում է՝ շնորհիվ հմուտ և բազմափորձ պրոֆեսորադասախոսական կազմի, ովքեր իրենց գործի նվիրյալներ են: Այս ֆակուլտետը գիտելիքի օվկիան է, և այստեղ դու դառնում ես ոչ միայն բանասեր և մանկավարժ, այլև բացահայտելով կյանքը նոր էջից՝ դու նաև դառնում ես հոգեբան: Պատահականություն չէ, որ հենց այս ֆակուլտետում են ուսանել այնպիսի գրողներ, արվեստագետներ և մտավորականներ, որոնք նոր շունչ, նոր երանգ ավելացրին ժամանակի մտածողությանը, և որոնցից շատերը լրացրին հայ գրականության հարատևման աստղաբույլը: Յուրաքանչյուր ուսանողի համար մեծագույն պատիվ է ուսանել այն լսարանում, որը կրում է հայ մեծ արձակագիր Հրանտ Մաթևոսյանի անունը. դա թե՛ պարտավորեցնող է, թե՛ երջանկացնող: Այստեղ մենք կբացահայտենք մեր սեփական ուժերը, կհասնենք ինքնաճանաչողության: Ես համոզված եմ՝ Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետը կլինի ուղենիշ դեպի գեղեցիկը, դեպի լուսավորը…

Կառլոս ՆԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող

Թանգարանային գիտաժողով

Հոկտեմբերի 1-5-ը Ամստերդամի մի շարք հեղինակավոր թանգարաններում անցկացվեց Թանգարանների միջազգային խորհրդի /ԻԿՕՄ/ Մարքեթինգի և հանրության հետ կապերի միջազգային կոմիտեի գիտաժողով: «Թանգարաններ և քաղաքը. մարքեթինգ և ավելին» խորագրով գիտաժողովի «Թանգարանները և համայնքները», «Թանգարանները և թվային փոխակերպումները», «Թանգարանը և մեդիան», «Թանգարանները և դրանց արդի առաքելությունը» թեմաներով:

Աշխարհի 30 երկրների մասնակիցների և ծրագրում ընդգրկված 35 զեկուցողների շարքում Հայաստանը ներկայացրեց Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Դավիթ Պողոսյանը, ով «Ընդլայնվող թանգարան. տարբեր հանրային տարածքներում աշխատելիս և տարբեր հանրային տարածքների վերածումը թանգարանների (հայկական թանգարանների փորձի հիման վրա)» զեկուցումով անդրադարձավ ՀՀ տարբեր թանգարանների, ինչպես նաև թանգարանային գործունեության եղանակներ կիրառող մի շարք կազմակերպությունների, ձեռնարկությունների դրական փորձին:

«Հնգօրյա միջազգային գիտաժողովը մասնագիտական զարգացման կարևոր հարթակ է, ինչպես նաև հնարավորություն ծանոթանալու աշխարհի տարբեր հետազոտողների մոտեցումներին, փորձին, թանգարանային գործի զարգացման արդի միտումներին,-ասում է Դավիթ Պողոսյանը,- գիտաժողովը նաև մասնագիտական նոր կապերի հաստատման և համագործակցության, թվային հարթակներում մտքերի փոխանակման լավ հնարավորություն էր: Այն կարևոր էր նաև նորարարական մոտեցումներով աշխարհում հայտնի նիդերլանդական և հատկապես Ամստերդամի մի շարք թանգարաններում լինելու և կիրառվող աշխատանքներին մոտիկից ծանոթանալու տեսանկյունից»:

Դ. Պողոսյանը վստահեցրեց՝ ձեռք բերած գիտելիքները կներդնի դասավանդման գործընթացում:

Քննարկում ամերիկահայ գործընկերների հետ

ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի արհմիութենական կազմակերպության ներկայացուցիչները այցելել էին Մանկավարժական համալսարան:

Սպասարկման ոլորտի միջազգային միության (SEIU Local 721) համակարգող Շուշան Բաղբուդարյանը, գործադիր խորհրդի անդամ Ստեփան Հովակիմյանն ու Տնային աջակցության կենտրոնի սոցիալական աշխատող Սիլվա Քեշիշյանը ներկայացրին միության աշխատանքի կարևորությունն ու անհրաժեշտությունը ԱՄՆ-ում:

«Մեր զորությունը մեր հավաքական ուժի մեջ է, միասնականության շնորհիվ պետք է անենք ամեն բան, որպեսզի Հայաստանն ավելի բարգավաճի, իսկ արտագաղթը նվազի»,- ասաց Շուշան Բաղբուդարյանն ու հավելեց, որ իրենց կառույցը հանրահավաքների և ցույցերի միջոցով ակտիվորեն մասնակցում է աշխատակիցների շահերի պաշտպանությանն ու կարևոր հարցերի լուծմանը՝:

Սոցիալական աշխատող Սիլվա Քեշիշյանը ներկայացրեց կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերը և նկատեց, որ մարդկային ջերմ հարաբերությունների շնորհիվ հաճախ կարելի է հասնել ցանկալի արդյունքի: Վերջինս ընդգծեց, որ կազմակերպությունը համախմբում է հայ պաշտոնյաներին ու անհրաժեշտ ցուցումներ տալով՝ նպաստում է, որ մեր հայրենակիցները բարձր պաշտոններ զբաղեցնեն:

Սպասարկման ոլորտի միջազգային միության գործադիր խորհրդի անդամ Ստեփան Հովակիմյանը հաճախ է լինում հայրենիքում: «Ծնվել եմ Սիրիայում, սակայն սիրտս ու հոգիս ծնվել են Հայաստանում»,- ասաց Ստեփան Հովակիմյանը և հավելեց, որ հիացած է հայերի կրթության բարձր որակով ու ուսումնատենչությամբ: Նա վստահեցրեց, որ համագործակցելու մեծ ցանկություն ունի նաև Մանկավարժական համալսարանի հետ:

Ամերիկահայ գործընկերները ցանկություն հայտնեցին իրենց փորձը տարածել նաև Հայաստանում, հայրենիքում կազմակերպել աշխատակիցների շահերը պաշտպանելու փորձի փոխանակման ձեռնարկներ: Նրանք նկատեցին, որ արհմիությունների և կառավարության միջև պետք է կամուրջներ ստեղծել և համատեղ աշխատանք ծավալել:

Մանկավարժական համալսարանի Արհմկոմիտեի նախագահ Հասմիկ Սարգսյանը ներկայացրեց իր ղեկավարած կառույցի գործունեությունը՝ վստահեցնելով, որ աշխատանքում առաջնորդվում են հօգուտ աշխատակցի շահերի և համերաշխության:

Արհմիության անդամները շնորհակալություն հայտնեցին հյուրերին ԱՄՆ-ում հայանպաստ գործունեության համար և բարձր գնահատեցին ամերիկահայ գործընկերների և բուհի արհմիության գործունեությունը:

Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի շրջանակներում հայրենիք այցելած հյուրերը շրջեցին համալսարանի պատմության թանգարանում, ծանոթացան բուհի պատմությանն ու ժամանակագրությանը:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԴԱՍ-ԷՔՍԿՈՒՐՍԻԱ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կենսաբանություն և էկոլոգիա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողներս «Արտակարգ իրավիճակներ և քաղաքաշտպանության հիմունքներ» առարկայի շրջանակներում սեպտեմբերի 26-ին պահեստի գնդապետ (փրկարարական ծառայության) Պերճ Կարապետյանի և երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու Վալերի Խունդկարյանի ղեկավարությամբ այցելեցինք Ազատի ջրամբար: Դասախոսություն- էքսկուրսիայի միջոցով մենք ծանոթացանք ջրամբարի պատմությանը՝ տեղեկանալով, որ Ազատի ջրամբարը գտնվում է Արարատի մարզում, Ազատ գետի հոսանքում, Լանջազատ գյուղի մոտ և շահագործման է հանձնվել 1976 թվականին: Ջրամբարի մակերեսը 2.85կմ^2 է, ընդհանուր ծավալը՝ 70 մլն^3, օգտագործվում է ոռոգման համար: Դասախոսների հետ քննարկեցինք ջրամբարին առնչվող մի շարք կենսաբանական և էկոլոգիական հարցեր՝ ստեղծելով միջառարկայական կապ, ընթացքում պարզաբանելով «կատաստրոֆիկ ջրթափ», «խզվածք», «բերմա» և նմանատիպ մի շարք հասկացություններ, Վ. Խունդկարյանը խոսեց նաև ակնհայտ երևացող խոշոր ճեղքերի և դրանցից ծագող խնդիրների մասին: Քանի որ այդ պահին ջրի մակարդակը բավականին ցածր էր՝ 17-18 մլն մ^3, մենք հնարավորություն ունեցանք ուսումնասիրություններ և վերլուծություններ կատարել նաև ջրամբարի ստորին հատվածում: Անցկացվող դասէքսկուրսիան մեզ հնարավորություն տվեց նաև ծանոթանալ և ուսումնասիրել տեղի բուսականությունն ու կենդանիներին:

Օրվա վերջում հաճելի և օգտակար գիտելիքներով «զինված» մենք վերադարձանք համալսարան՝ հասկանալով, որ տեսական գիտելիքները պետք է անպայման համադրել գործնական գիտելիքների հետ՝ լիարժեք արդյունք ունենալու համար:

Անի ՕՀԱՆՅԱՆ
Կենսաբանության բաժնի ուսանողուհի

Ես քո որդին եմ, Հայաստան

«Տիգրան Մեծ» հրատարակչությունում լույս է տեսել Գարեգին Գևորգյանի «Ես քո որդին եմ, Հայաստան» գրքույկը: Այն չափածո պատում է հայ մարդու անցած ճանապարհի, ոգու և մտքի հաղթանակների մասին, այն հայ մարդու.

«Ով խիղճն հացի պես
Անհաշիվ դարեր
Արդար է պահել
Աշխարհի առաջ,
Երկնքին ի տես»:

Բանաստեղծ Գարեգին Գևորգյանի մարդկային տեսակի ու ոգու մեջ հենց այդ հայն է՝ արմատներով, հազար թելերով կապված մայր հողին, «խոնարհ ու ըմբոստ ու նաև խելառ», ով «ոսկու փոխարեն կրակն է ընտրել», ում համար ազատ ապրելու տենչը գալիս է Հայկ Նահապետից ու Անգեղյա Տորքից...Հավերժի ճամփորդ հայը շարունակում է իր ճանապարհը՝ հողի ուժով ու ապրելու տենչով, շարունակում է ապրել ու արարել...

Ես քո որդին եմ,
Մա՛յր իմ, Հայաստա՛ն,
Ոստա՛ն հայրենի,
Սրբազա՛ն իմ հող
Երկի՛ր Նաիրյան:
Հայկ Նահապետի
Պատգամն եմ պահել
Ես դար ու դարեր,
Ազատ ապրելու
Տենչով տոգորվել,
Քո հողն եմ հերկել
Գութան-արորով,
Հորովել երգել
Գարնան արևով:
Անգեղյա Տորքի
Ամուր ձեռքերով
Բերդեր եմ շինել
Հսկա քարերով:
Տուն եմ կառուցել,
Ջրանցքներ բացել,
Տնկել այգիներ,
Ու ծառեր Սոսյաց,
Իսկ Նավասարդյան
Ցնծուն տոներին՝
Փառք տվել Հայոց

Հին աստվածներին
Մեծն Արամազդին,
Վահագնին, Տիրին
Ու գինին հեղել
Հայրենի հողին:

...Ուրիշ տուն ու վայր
Ես չեմ ցանկացել,
Ոսկե հորթերին
Չեմ հավատացել,
Գայլի բնազդով
Չեմ հպարտացել:
Թե հուռութքներով,
Պատիր խոսքերով
Փորձել են դյութել,
Սիրտս գրավել,
Անհամար ոսկե
Սարեր խոստացել,
Հոգիս դառնացել,
Սակայն չի խաբվել:
Ոսկու փոխարեն՝
Կրակն եմ ընտրել,
Իսկ երբ խավարը
Շատ է թանձրացել,
Փրկության բոլոր
Դռները գոցել,
Հայացքս կրկին
Երկինք եմ հառել.
Աստղկա սիրով,
Վահագնի հրով,
Միհրի արևով
Դու ես վերստին
Հույս ու հավատիս
Ճրագը վառել:

...Թմբիրում ապրած
Հոգիս արթնացել
Եվ անկախության
Դրոշն է պարզել,
Չար ոսոխի դեմ
Անվախ ծառացել,
Խաչով ու սրով
Արցախն ազատել:
Հայրենի՝ երկիր,
Ես քո որդին եմ,
Հավերժի ճամփորդ
Հայի ոգին եմ,
Միակն աշխարհում,
Ով խիղճն հացի պես
Անհաշիվ դարեր
Արդար է պահել
Աշխարհի առաջ,
Երկնքին ի տես,
Քանզի այն բաց է
Եղել ի ծնե,
Ինչպես Մասիսի
Կատարը ձյունե:

Երկխոսություններ ծնողների հետ

«...Երեխային ճիշտ դաստիարակելու համար անհրաժեշտ է նրան լավ ճանաչել: Լավ ճանաչելու համար անհրաժեշտ է կարողանալ նկատել նրա վարքի յուրաքանչյուր մանրուք, նրբազգացորեն որսալ նրա մտքի նրբերանգներն ու փոփոխությունները, զգալ նրա տրամադրության ամենաչնչին տատանումները, իմանալ, թե ինչի վրա է ուրախանում և ինչից է տխրում... Առանց երեխայի վարքը ուշադիր դիտելու ծնողների համար շատ և շատ դժվար կլինի հասկանալ նրա այս կամ այն արարքի դրդապատճառը, հետևաբար՝ ճիշտ արձագանքել նրա արարքներին: Երևի հենց դա է մեծերի և փոքրերի միջև տեղի ունեցող կոնֆլիկտների հիմնական պատճառը:

Մանկավարժական նրբանկատությունը կասկածամտություն կամ լրտեսություն չէ, այլ սեփական երեխային, նրա վարքը, մտքերն ու արարքները ուսումնասիրելու մշտական պահանջ, նրան հասկանալու օբյեկտիվ, բարյացակամ ձգտում: Այդպիսի դիտողականությունը ծնողներին օգնում է որսալու երեխայի ներաշխարհի յուրաքանչյուր փոփոխությունը, նրա զգացմունքները, հասկանալու նրա արարքների դրդապատճառները, տեսնելու երեխայի մեջ այն դրականը, որը կարելի է խրախուսել, այն վատը, որը պիտի արմատախիլ անել, շտկել: Սակայն ոչ բոլոր ծնողներն ունեն մանկավարժական կրթություն, այդ իսկ խատճառով նրանք իրենց երեխաներին դաստիարակում են՝ կա՛մ հիշելով իրենց մանկության տարիներն ու այդ տարիներին մայրիկների, հայրիկների, պապիկների ու տատիկների դաստիարակչական փորձերը, կա՛մ ենթագիտակցաբար, առանց գիտական իմացության: Բնավ չթերագնահատելով դաստիարակության գործում ելքեր որոնելու նաև ա՛յդ ուղիները՝ կամենում ենք նշել, որ հաճախ առաջնորդվելով առանց մանկավարժահոգեբանական գիտելիքների՝ ծնողների տեսադաշտից շատ բան է վրիպում, ինչը հանգեցնում է այնպիսի հետևանքների, որոնց համար ծնողները դառնորեն ափսոսում են ավելի հասուն տարիքում, երբ արդեն ուշ է որևէ բան փոխելը»,- գրում է հեղինակը:

ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում 2016 թվականի հոկտեմբերի 28-ին «Կոնսոցիատիվ ժողովրդավարություն. քաղաքական կազմաբանությունը և իրացման ներուժը» խորագրով կայացած հանրապետական գիտաժողովի նյութերը:

«Հայաստանի Հանրապետության անկախ զարգացման 25 և ավելի տարիների ընթացքում ակնհայտ դարձավ, որ երկրի հետագա առաջընթացը կախված է բազմաթիվ բաղադրիչներից, որոնց թվում կարևորագույն դերակատարություն ունեն հումանիտար կրթությունն ու հասարակական գիտությունները: Անկասկած է, որ հասարակական գիտությունների փնջի մեջ, թերևս, պայմանավորված ժամանակակից զարգացումներով, քաղաքական գիտություններին վերապահված է առանձնահատուկ դերակատարություն երկրի հետագա առաջընթացի օպտիմալ մոդելի առաջադրումով և հետագա մշակումով, որը ոչ միայն քաղաքական ասպեկտ ունի, այլ նաև սոցիոլոգիական, մշակութաբանական, տնտեսական և անվտանգության բաղադրիչներ:

Նման դերակատարություն կարող է ստանձնել իր արդյունավետությունը Ավստրիայում, Բելգիայում, Հյուսիսային Իռլանդիայում և այլ երկրներում ապացուցած կոնսոցիատիվ ժողովրդավարության հայեցակարգը: Բնական է, որ ժողովածուն նվիրված է տվյալ հիմնախնդրի տարբեր ասպեկտների քննությանն ու վերլուծությանը, ինչպես նաև կանխատեսմանը: Հայեցակարգն ունի ինչպես ներպետական, այնպես էլ տարածաշրջանային ընդգրկում: Տվյալ պարագայում հարկ է նկատել, որ խոսքը ոչ թե օտար մոդելի տեղայնացման, այլ երկրի ու տարածաշրջանի կենսական պահանջմունքների բավարարմանն ուղղված հեռանկարային հետազոտությունների իրականացման մասին է, որոնց հիմքում ընկած են հասարակության արդի էվոլյուցիայի հիմնարար տրենդները (միտումները)»,-գրում է Լևոն Շիրինյանը գրքի նախաբանում:

Մարդու պլաստիկ անատոմիա

2017 թ.-ին «Տիգրան Մեծ» հրատարակչության կողմից լույս է տեսել Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների թեկնածու Արտաշես Քեշիշյանի «Մարդու պլաստիկ անատոմիա» հայալեզու գիրքը:

Գրքում հեղինակը ներկայացնում է նշանավոր դպրոցների, ուսումնական օջախների ավանդույթներն ու դրվածքները: Այդ ամենի հետ մեկտեղ աշխատանքում տեղ են գտել անվանի արվեստագետների ոչ միայն խոսքերը, մտքերը, մարդու անատոմիայի ուսուցման մեթոդները, տրակտատներն ու գրառումները, այլև նրանց կողմից կատարված անատոմիական գծանկարները, ստեղծագործական գործընթացում արված փնտրումները և նախանկարները, որոնք առավել պատկերավոր են դարձնում աշխատությունը: Այդ ամուր հենքի վրա և տվյալ ասպարեզում խորը մասնագիտական գիտելիքների, մանկավարժական երկարամյա փորձի շնորհիվ հեղինակը հիմնավորում է մարդու մարմնաձևի, նրա բազմապիսի խնդիրներին վերաբերող իր մոտեցումները:

Արտաշես Քեշիշյանի «Մարդու պլաստիկ անատոմիա» գիրքը բավականին կուռ, համակարգված արժեքավոր աշխատություն է՝ նախատեսված ուսանողների, մասնագետների և արվեստասեր հասարակության համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնը, ՀՊՄՀ-ի մանկության հիմնախնդիրները ուսումնասիրող լաբորատորիան անցկացնում են մանկավարժական համահամալսարանական օլիմպիադա՝ նվիրված ՀՀ և Մայիսյան հերոսամարտերի 100 ամյակին:

Օլիմպիադային կարող են մասնակցել ՀՊՄՀ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները:

Օլիմպիադայի նպատակն է՝ նպաստել բակալավրիատի ուսանողների և մագիստրոսների մանկավարժական գիտելիքների ամրապնդմանը, մանկավարժական պրակտիկ գործունեություն ծավալելու կարողությունների և հմտությունների ձեռք բերմանն ու խորացմանը, մանկավարժական մտածելակերպի ձևավորմանը:

Օլիմպիադան անցկացվում է 3 փուլով՝ 2017թ. հոկտեմբերի 30-ից 2017թ. դեկտեմբերի 22-ը.

	Բակալավր	Մագիստրատուրա
Օլիմպիադայի 1-ին փուլ	Հոկտեմբերի 30, 2017թ.	Հոկտեմբերի 30, 2017թ.
Օլիմպիադայի 2-րդ փուլ	Նոյեմբերի 24, 2017թ.	Նոյեմբերի 24, 2017թ.
Օլիմպիադայի 3-րդ փուլ	Դեկտեմբերի 22, 2017թ.	Դեկտեմբերի 22, 2017թ.
Արդյունքների հրապարակում	Հունվարի 19, 2018թ.	Հունվարի 19, 2018թ.
Հայտերի ընդունման վերջնաժամկետն է	Հոկտեմբերի 25, 2017թ.	

Օլիմպիադայի հարցերն ու առաջադրանքները կազմված են մանկավարժության հետևյալ բնագավառներից՝

■ բակալավրիատի ուսանողների համար – Տեսական մանկավարժություն, Գործնական մանկավարժություն, Կրթության և մանկավարժական մտքի պատմություն, արտադասարանական - արտադպրոցական դաստիարակություն, առողջ ապրելակերպ, ընտանեկան դաստիարակություն, հատուկ, նախադպրոցական կրթություն:

■ մագիստրատուրայի ուսանողների համար - կրթության բնագավառի օրենսդրություն, երեխաների իրավունքներ, մանկության հիմնախնդիրներ, ուսուցչի, սոցիալական մանկավարժի, հոգեբանի կոմպետենցիաներ, երեխաների սոցիալական աջակցությանն ուղղված հարցեր, ընտանիք-դպրոց կապի ամրապնդում, դասին և կրթական միջավայրին ներկայացվող վալեոլոգիական պահանջներ, ներառական կրթություն, կիրառական մանկավարժություն, հայ մանկավարժական մտքի պատմություն, մանկավարժական տեխնոլոգիաներ և այլն:

Օլիմպիադայի անցկացման կանոնակարգը.

■ Օլիմպիադան կանցկացվի 3 փուլով՝

1. Բակալավրները

■ 1-ին փուլում՝ մասնակիցներին տրվում է 20 հարցից բաղկացած թեստ՝ 80 միավոր հավաքած մասնակիցները անցնում են հաջորդ փուլ:

■ 2-րդ փուլում՝ մասնակիցները լուծում են մանկավարժական տարբեր իրավիճակներ և տալիս են իրավիճակի լուծման առնվազն երեք տարբերակ:

■ 3-րդ փուլում՝ մասնակիցներին տրվում է առաջադրանք՝ առանձնացնել մանկավարժության արդի որևէ հիմնախնդիր, հիմնավորել այդ հիմնախնդրի արդիականությունը և հիմնախնդրի լուծման առաջարկով դիմել ՀՀ ԿԳՆ նախարարին:

2. Մագիստրոսները.

■ 1-ին փուլում՝ մասնակիցները ներկայացնում են մանկավարժական 3 տարբեր իրավիճակներ և դրանցից յուրաքանչյուրի լուծման առնվազն երեք տարբերակ:

■ 2-րդ փուլում՝ մասնակիցները ընտրում են մանկության ժամանակակից որևէ հիմնախնդիր, ներկայացնում են դրա առկա վիճակը ՀՀ-ում, տալիս են դրա լուծման սեփական տարբերակներն ու մշակում դրանց իրականացման մանկավարժական պայմանները:

■ 3-րդ փուլում՝ մասնակիցները պատրաստում են տրված թեմայով քարոզ:

(Քարոզի և այլ առաջադրանքների անցկացման պայմաններն ու գնահատման չափանիշները մասնակիցներին կուղարկվեն յուրաքանչյուր փուլի սկզբին՝ առնվազն 5 օր առաջ:)

Օլիմպիադայի մասնակիցների խրախուսումը.

Օլիմպիադայի մասնակիցները կստանան մասնակցության մասին հավաստագրեր, իսկ հաղթողները (առաջին, երկրորդ, երրորդ տեղեր) նվերներ և դիպլոմներ:

Օլիմպիադայի մասնակցության հայտի ձևը

Անուն, հայրանուն, ազգանուն
Ֆակուլտետ, բաժին, կուրս
Հեռախոս էլեկտրոնային հասցե

■ Օլիմպիադայի մասնակցության հայտն ուղարկել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի էլ. հասցեին՝ profedu40@aspu.am մինչև 2017թ. հոկտեմբերի 25-ը ներառյալ:

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ
Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 17.10. 2017 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am